Յիսուս Քրիստոս ասոր վրայ նստեցուցին՝ երբ փշեայ պսակով մը կը պսակէին, թշնամանելով և նախատելով Պիղատոսի տան մէջ, ուրկէ՝ յետոյ հոս բերուեցաւ յիշեալ սիւնը(*) (Ո. Ս. Ե. էջ 53)։ Այս սեղանը յառաջագոյն կը վերաբերէր հապէշաց (Հան. էջ 195)։

Փշեայ պսակի մասին Աւետարանին մէջ կը կարդանք (Մարկ. ԺԵ. 17) «Եւ զգեցուցանեն նմա քղամիդ կարմիր և ծիրանիս, և եդին ի գլուխ նորա պսակ արարեալ ի փշոց»։

Ս. Գրոց բուսաբանները կ'ըսեն թէ Քրիստոսի փշեայ պսակը կնիւնի ճիւղերով հիւսուած գժնիկի փուշով պսակ մ'էր, լատիներէն paliurus spineus Christi *անուամբ, որ աւելի առատօրէն կը գտնուի Երիքովի ճանապարհի երկայնքին՝ հեղեղատներու եզերքը, նոյն գժնիկին ճիւղերը այնքան ճկուն և փշոտ են որ մօտեցողին ձեռքերը և հագուստները կը պատռեն։ Փըշեայ պսակ մը՝ կ'ըսուի թէ՝ մինչեւ այսօր պահուած կայ Բարիզի* Notre-Dame *եկեղեցիին մէջ, ուրիշ մասունքներու հետ(**)։ Նոյն փշեայ պսակը* 1238*ին*

(*) Հնագոյն ուղեգիրներ կը յիշատակեն այս սիւնը. «Qualiter Sita est Jerusalem» ճառին անանուն հեղինակը 1095ին կը գրէ. «Գողգոթայի ձախ կողմն է Բանտը, եւ անոր մօտ՝ ձախ կողմը կը տեսնուի այն սիւնը՝ որուն կապուեցաւ Յիսուս»։ Saewulf (1102) Քրիստոսի բանտին վրայ խօսելէ յետոյ, կ'ըսէ թէ մէկ կողմը կը գտնուի խաչգիւտի տեղը, եւ միւս կողմը՝ «Բանտէն ոչ հեռու, կը տեսնուի մարմարէ այն սիւնը՝ որուն կապուեցաւ Յիսուս Քրիստոս՝ երբ Պիղատոսի պալատին մէջ ծաղրուեցաւ» (Bar. Gr. էջ 79)։

(**) Ֆրանսայի մեծ մատենագիրները կը պնդեն թէ՝ երբ Մեծն Կարոլոս իր Երուսաղէմէ վերադարձին Կ. Պոլիս հասաւ, Արեւելքի կայսրը տուաւ անոր «Մեր Փրկչին փուշ պսակը՝ որուն փուշերը անոր ներկայութեան հրաշքով մը ծաղկեցան։ Այս աւանդութիւնը, որ ըստ Vincent de Beauvaisի, սարքեր է, Երուսաղէմի եպիսկոպոսն է